ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

ի պատասխան Ձեր 06.12.2023թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի ջերմոցատնկարանային վարչության շինությունները վառելափայտով չեն տաքացվում: 2022թ.-ին «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի 119 սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է ընդհանուր 238խմ վառելափայտ, յուրաքանչյուրին՝ 2խմ: Աշխատակիցները ստորագրել են հատուկ սահմանված ընդունման ակտը՝ նշելով ստացած վառելափայտի ծավալը և անձնագրային տվյալները, ուստի վերը նշված փաստաթղթերը ենթակա չեն հրապարակման:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի 3 աշխատակիցներ «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ից ստացել են 5խմ վառելափայտ, իսկ «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքերի ջեռուցման համար փայտ չի օգտագործվում, ուստի կազմակերպությունը «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ից այդ նպատակով փայտ չի ստացել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ